ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՄՏԱՎՈՐ ԹԵՐԶԱՐԳԱՑՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ
ԵՐԵԽԱՆԵՐԻ ԹԻՎ 11 ՀԱՏՈՒԿ (ՕԺԱՆԴԱԿ) ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ

Երևան 0071, Նուբարաշեն 6-րդ փող., 1-ին շենք, հեռ.010-47-52-40, E-mail: 11hatukdproc@mail.ru, Web: http://yerevan11s.schoolsite.am

№ Ե- 109 « 04 » դեկտեմբերի 2023թ.

«Ֆոտոն» ՍՊԸ ընկերության տնօրեն
Նելլի Պետրոսյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի տիկին Պետրոսյան.

«Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ (օժ.) դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Ֆոտոն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 29.09.2023թ-ին կնքված թիվ ԵՄԹԵՀԴ-ԳՀԱՊՁԲ-23/02-3 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «Ֆոտոն» ՍՊԸ պետք է մատակարարեր պայմանագրով հաստատված սննդամթերքը, որը չի մատակարարել :

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ ենթակետը (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի) «Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ (օժ.) դպրոց» ՊՈԱԿ–ը 01.12.2023թ-ին միակողմանի լուծել է պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդհոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի , պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները :

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ ՝ եթե մինչև սույն թվականի դեկտեմբերի 14-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի 143373 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 215059 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները , ապա «Ֆոտոն» ՍՊԸ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի համաձայն

«Ֆոտոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազոր մարմին, իսկ մատակարարի կողմից պայմանագիր կնքելու նպատակով ներկայացրած որակավորման և պայմանագրի ապահովումները միակողմանի հաստատված հայտարարության տուժանքի ձևով կներկայացվեն մատակարարի բանկ՝ նշված գումարները գանձելու նպատակով: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ (օժ.) դպրոց» ՊՈԱԿ-ի անվամբ բացված 900018001991 հաշվեհամարին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև սույն թվականի դեկտեմբերի 10-ը ներառյալ ներկայացնել Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ (օժ.) դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահություն:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ _____ Ա. ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

Կատարող՝ գնումների համակարգող
Վ. Գասպարյան
Հեռ. 010-47-52-40